յանձանձանս։ եւ այսպիսի քաղաքավարութեամբ հասեալ 'ի խոր ծերութիւն հանդեաւ խաղաղութեամբ 'ի Քրիստոս 'ի Մայիսի, (1853) 'ի հասակի 90 ամաց։ զորոյ ըզմարմինն բարձեալ թաղեցին 'ի դաւիթ եկեղեցւոյ Սուրբ Փրկչի 'ի կարգս Պատրիարքաց։ թողեալ յիշատակ եկեղեցւոյ զերիս հատոր գիրս կոչեցեալ Զանազանութիւն հինգ դարուց, համառօտ Պատմութիւն Հին և Նոր Կտակարանաց հանդերձ բարոյական յորդորանօք գրեալ 'ի բարբառ Տաճկաց, եւ զգիրս Թանգարան խրատու յոճ հայկական պարզ բանիւ, համառօտեաց նաեւ զայլ գիրս և զմեկնութիւնս Ս։ Գրոց՝ ձեռագիր։ բաղում են գործք սորին, այլ գոլով արտաքոյ նպատակի մերոյ՝ թողաք 'ի բաց։

Յերկրորդ ամի իշխանութեան Յովհաննու Պատրիարքի զարթեաւ խնդիրն Ս։ Տեղեաց, և վէճ Լատինաց ընդ Յունաց։ Քանզի Յովսէփ Վալերկայ Լատին Պատրիարքն Երուսաղէմի օժանդակ գտեալ զՏէրութիւնն Գաղղիոյ՝ խընդրէր 'ի Դրանէ Օսմանեան Պետութեան կորզել զոմանս 'ի Ս։ Տեղեաց 'ի ձեռաց Յունաց՝ և տալ Լատինաց, և պահանջք նոցին էին այսոքիկ։ մեծ եկեղեցին Բեթղեհէմի դրամբք և բանալեօք, և մասն ինչ պարտիզօք յետուստ կողմանէ։ եկեղեցին Ս։ Աստուածածնի 'ի ձորն Գեթսէմանի՝ ուր է գերեզման նորին։ տեղի Համբարձման Տեառն 'ի լեառն Ձիթենեաց։ Պատանատեղին։ մեծ և փոքր դըմբեթքն 'ի վերայ Գերեզմանին Քրիստոսի, և զեօթն կամարս Ս։ Կուսին 'ի Ս։ Յարութիւն, այլոքն հանդերձ։ Իսկ Քիրիլլոս Պատրիարքն Յունաց առեալ 'ի թիկունս ըզկայսրն Ռուսաց զՆիկողայոս՝ ընդդէմ եկաց յամենայնի խնդրոց Լատինաց։

Եւ այս երկու հակակիր մարմինք յարուցեալ ընդդէմ միմեանց՝ չեղեւ հնար լինել իրաւախոհ 'ի միջի իւրեանց։ եւ 'ի բաղմանալ բանից և վիճմանց՝ Օգոստոսին Կայսրն Օսմանեան Սուլթան Մէճիտ Արքայ, կամեցեալ խաղաղել զնոսա և բառնալ զվէճն 'ի միջոյ, առաքեաց հրովարտակաւ զամն յերեւելեաց Արքունի Դրան Աֆիֆ Պէյ յերուսաղէմ, կարգաւորել անդ զխնդիրն։ Եւ եղեւ 'ի հասանիլ նորա 'ի քաղաքն Սուրբ, կազմեցաւ ժողով մեծ 'ի Ս։ Յարութիւն 'ի դահլիճ Գերեզմանի Տեառն, ուր էին Պատրի-